ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 11 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր **Արարատ Մխիթարի Հակոբյանի «Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը լրամշակված և բարելավված տարբերակն է՝ հարստացված մի քանի մամուլ ծավալով: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ձեռնարկը ներկայացված է պատմության ընդունված պարբերացման փուլերով՝ հնագույն, հին, միջին, նոր և նորագույն ժամանակաշրջաններով և համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած «Հայոց պատմություն» առարկայի բուհական ծրագրային պահանջներին և չափորոշիչներին: Գրքում մատչելի կերպով ուրվագծված են հայոց հազարամյակների սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության բազում հարցեր: Հատկապես շեշտ է դրված հայոց պետականությունների պատմությանը, ազատագրական շարժումների ու պայքարի հարցերին, հայ հասարակական-քաղաքական մտքի հոլովույթին, ազատագրական ծրագրերին, ավանդական քաղաքական կուսակցությունների գործունեությանը և այլն, իսկ այնուհետև հանգամանալից անդրադարձ է կատարված 20-րդ դարի Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հարցերին: Աշխատանքի յուրաքանչյուր բաժնի կամ գլխի վերջում հեղինակը ընդհանուր գծերով ներկայացրել է հայկական հարուստ մշակույթը: Յուրաքանչյուր թեմայի վերջում տրված են հարցեր ու առաջադրանքներ, որոնք կարող են նպաստել ուսանողության ուսումնական գործընթացի բարելավմանը, մատուցվող նյութի յուրացմանը: Գրքում պատշաճ կերպով անդրադարձ է կատարված նաև հայ գաղթավայրերի ու սփյուռքի պատմության հարցերին՝ իբրև հայոց պատմության մի օրգանական ամբողջություն: Ձեռնարկի արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը համառոտ անդրադարձ է կատարել վերջին տարիների՝ 2018-2022 թթ. և նրա շուրջ ծավալվող իրադարձություններին, մասնավորապես՝ 2020 թ. Արցախյան ձախողված պատերազմի հանգամանքներին: Ձեռնարկի արժանիքներից է նաև այն, որ

վերջում տրված են պատմական կարևոր դեպքերի և իրադարձությունների ժամանակագրությունը, ինչը ևս կարող է նպաստել հայոց պատմության նյութի և պատմական իրադարձությունների տարեթվերի անսխալ յուրացմանը:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Էդ.Գ.Մինասյան՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

2) Գ.Ս.Ստեփանյան՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

3) Հ.Հ.Մանուչարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) հասարակակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքն իր ծավալով, նյութի շարադրանքով ու հարուստ բովանդակությամբ լիովին համապատասխանում է ոչ մասնագիտական բուհերի ուսանողության, ինչպես նաև «Հայոց պատմություն» առարկան դասավանդող դասախոսների համար ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, հասարակագիտության ամբիոնի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր **Արարատ Մխիթարի Հակոբյանի «Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մայիսի 11
Երևան